Արմավիրի մարզի Այգեշատ /Վաղարշապատ/

համայնքի ղեկավարի 2019թվաակնի տարեկան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ որպես Այգեշատ համայնքի ղեկավար, ներկայացնում եմ 2019թ-ի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարմանը սահմանված կարգով կատարվում է հսկողություն:

Համայնքի հասարակական կարգի պահպանման համար սահմանվել է հսկողություն գիշերային ժամերին, որը իրականացվում է ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի միջոցով: Այս աշխատանքների շնորհիվ բավականին պակասել են անկարգություններն ու գողությունները: Աստիճանաբար հաստատվում է կարգապահությունը համայնքում :

Համայնքի փողոցների բոլոր խաչմերուկներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Նոր-տարին դիմավորելու համար զարդարվել է համայնքի հրապարակում գտնվող հուշարձանին հարակից եղևնիները և դրվել է զարդարված եղևնի

Տարեսկզբին Նոր-տարվա առիթով կազմակերպվեց Ձմեռ պապի այցելությունը բնակիչների տները և 1-ից մինչև 6 տարեկան ՝երեխաներին բաժանվեց նվերներ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի շնորհիվ փետրվարի13-ին Տյարն ընդառաջի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում: Այդ օրը 6 նորապսակների եկեղեցում կատարվեց ծիսակատարության կարգը այնուհետև արարողությունը շարունակվեց համայնքի կենտրոնում արարողակարգի համաձայն, նորապսակներին բաժանվեցին նվերներ:

Միջոցառմանը ներկա էին Երկիր Մեդիա հեռուստաընկերության լրագրողները, միջոցառումը նկարահանվեց և ցուցադրվեց:

Գյուղապետարանի աջակցությամբ դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմը, ինչպես նաև համայնքից այլ բնակիչներ ապրիլի 24-ին այցելել և ծաղկեպսակ են դրել 1915թվ.եղեռնի զոհերի հուշարձանին:

Մայիսի 9-ին՝ հաղթանակի օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում: 2019թվականի հունիս ամսին ասֆալտապատվել է համայնքի կենտրոնական փողոցից մինչև մշակութի տան,հարակից տարածքը շուրջ 300քմ,ինչպես նաև ավարտին է հասցվել մշակույթի տան և զոհվածների հուշարձանին կից հատվածի սալապատման աշխատանքները:

2019թվականի հունիսի մեկին երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ կազմակերպվեց միջոցառում որին մասնակցեցին հեքիաթի հերոսներ ,Մաշան և արջուկը: Այդ միջոցառմանը մասնակցեցին նաև դպրոցի երեխաները իրենց պարերով ուրախացրեցին ինչպես երեխաներին այնպես էլ ծնողներին: Ավագանու հաստատմամբ սոցիալական օգնություն է տրվել համայնքի թվով 18 առավել անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանի միջոցներով կառուցապատվում է մանկապարտեզի շենքը, որը կապահովի երեխաների ապահովությունը և անվտանգությունը:Մանկապարտեզի աշխատանքների ընթացքում տարածքից հեռացվել է շուրջ 280 խմ հող:

2019թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքում կատարվել են բավական աշխատանքներ կոմունալ ծառայությունների բնագավառում:

2016թվականի մայիսյան քառօրյա պատերազմումզոհվածների հուշաքարի մոտ կատարվել է ծաղիկների տնկում:

Կատարվել է բուժ ամբուլատորիայի շենքի ներքին հարդարման աշխատանքներ գաջապատվել է շինության ներքին պատերը:Մոնտաժվել է մանկապարտեզի հոսանքը :

Բավականին աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառում: 2019թ-ի ձմեռային և ամառային զորակոչը կատարվել է 100% նախապատրաստվել և զորակոչվել են հինգ զորակոչիկ, և մեկնել են զինծառայության:

Համայնքում տարված բացատրական աշխատանքների շնորհիվ:

Հաշվետու տարում համայնքում կատարվել է կենդանիների համաճարակային պատվաստումները հատկապես խոզի գրիպի դաբաղի և բրոցիլոզի դեմ: Կազմակերպվել և այժմ էլ կատարվում է աղբաթափություն ամիսը 4-5անգամ շաբաթական 1-օր յուրաքանչյուր կիրակի:

Կազմակերպվել և կատարվել է համայնքի բնակավայրերից դուրս ճանապարհների եզրերին տարիներ շարունակ կուտակված աղբի մաքրման և տեղափոխման աշխատանքները: Կատարվել է համայնքի փողոցների լայնացման և մաքրման աշխտանքներ

Աշխատանքներ են կատարվել Վաղարշապատի ՋՕՄ-ի հետ համայնքի Ուրց-Կոտայք Շամիրամ գոտուց օգտվող ջուր օգտագործողներին ժամանակին ջրով ապահովելու համար:Տեղադրվել է նոր ջրհան պոմպ

որը սպասարկում է համայնքի մի մասին թեթևացրել է Քասախ գետից օգտվող հատվածի ծանրաբեռնվածությունը:

Աշխատանքներ են կատարվել համայնքի Քասախ գետից սնվող Սարի-Առու կոչվող ջրատարները մաքրելու և որոշակի մասերում բետոնապատման աշխատանքներ կատարելու ուղղությամբ:

Ցորենաքաղի ժամանակ համայնքապետարանը կազմակերպեց ցորենի հունձը ,,Բիզոն,,մակնիշի կոմբայնով,որը ավելի բարենպաստ էր ցորենատերերի համար: Կորուստ չեղավ:Ցորենաքաղի ավարտից հետո այդ նույն կոմբայնը համայնքի ղեկավարի աջակցությամբ կատարեց հունձ Դաշտ, Լեռնամերձ համայնքներում,որից գոհ մնացին նշված համայնքների բնակիչները:

Այսքան կատարված աշխատանքների հետ մեկ տեղ կան նաև որոշակի դժվարություններ, որոնք խոչընդոտում են գյուղատնտեսության զարգացմանը:

Նախատեսված և ներկայացված է համայնքի ներսում կենտրոնական ոռոգման համակարգի ջրատարը կիսախողովակներ տեղադրելու նախագիծը, որը ընթացքի մեջ է:

Հաշվետվությանը ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակից

Գյուղ բաժնի պետ Մարտիրոս Սարիբեկյանը:

Այգեշատ համայնքի ղեկավար Ռոբերտ Հովսեփյան

04.02.2020թվական

ՔԱՂՎԱԾՔ

2020թ. փետրվարի 04-ին կայացած Այգեշատ համայնքի բնակիչների ընդհանուր ժողովի արձանագրությունից:

04.02.2020թվ. Արմավիրի մարզիԱյգեշատ համայնքի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Այգեշատ համայնքի բնակիչների ընդհանուր ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, դպրոցի տնօրենը և փոխտնօրենը, մանկավարժներ, բուժամբուլատորիայի աշխատակիցները համայնքի բնակիչներ թվով շուրջ 90 մարդ:

Հաշվետվությանը ներկա էր նաև Արմավիրի մարզպետարանի աշխատակից Մարտիրոս Սարիբեկյանը:

Օրակարգում 1.Այգեշատ համայնքի ղեկավար Ռոբերտ Հովսեփյանի 2019թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

2. Ընթացիկ հարցեր:

Զեկուցող Այգեշատ համայնքի ղեկավար Ռ.Կ. Հովսեփյան

Ներկայացվեց 2019թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունից հետո կայացավ քննարկում:

Բոլոր ներկաները բավարար գնահատեցին համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները:

Ավագանու անդամ Մ.Բաբայանը ողջունեց համայնքի ղեկավա րի կատարած աշխատանքները էլեկտրահա- ղորդման հենասյուների

փոխման աշխատանքների և համայնքի ոռոգման ներքին ցանցի կենտրոնական մասը կիսախողովակների տեղադրելու հետ:

ԱՅԳԵՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Ա.ԱՍԱՏՐՅԱՆ